# ՄՈՒՇ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ԻՆՔՆՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ շրջաններում իրադրությունն օրեցօր դառնում էր սպառնալից: Երիտթուրքական իշխանությունների սադրիչ քաղաքականության հետևանքով թուրք, քուրդ բնակչությունը խիստ թշնամանքով էին լցված հայ, ասորի և հույն ազգաբնակչության նկատմամբ:

1914թ. սեպտեմբերին ելուզակների կողմից Ուրմիայի շրջանում հրդեհվում են 30 հայկական և ասորական գյուղեր: Սեպտեմբերի 18-ի զեկուցագրում Ուրմիայի ռուսական փոխհյուպատոս Վվեդենսկին հայտնում է, որ պարսկահպատակ քրդերն աստիճանաբար կողմնորոշվում են դեպի թուրքերը: Նրանց շրջանում նկատվում է գերմանական հետախուզության և թուրք գործակալների գործունեության աշխուժացում:[1]

Չնայած երիտթուրքական կառավարության ընդգծված հակահայ քաղաքականությանը, օսմանահպատակ հայերը շարունակում էին կատարել իրենց քաղաքացիական պարտքը: Դրանից օգտվելով, իշխանությունները բացահայտ թալանի էին դիմում: Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Վահան Փափազյանի վկայությամբ Մուշի «...շուկան ավերակի էր վերածված. խանութները դատարկ էին, կյանքը մեռած»:[2] Տնտեսապես թուլացնելով և ունեզրկելով հայերին, թուրքական իշխանությունները մի շարք նախազգուշական միջոցառումներից հետո (հայ տղամարդկանց զորակոչում, ապա՝ ոչնչացում, հայ աշխարհիկ, հոգևոր և քաղաքական ներկայացուցիչների սպանություն) սկսում են քաղաքացիական բնակչության զանգվածային աքսոր և կոտորած:

1915թ. գարնանը սկսվում է Տարոնի հայ բնակչության մասնակի կոտորածը, որը՝ գնալով ահագնանում է: Ոճրագործություններն իրականացնելու համար տեղական երիտթուրքական իշխանություններն օգտագործում էին քուրդ հրոսակներին: Դաժանություններով հատկապես աչքի են ընկնում հայտնի ելուզակներ Մուսա բեյը և շեյխ Հազրաթը: Քրդերին մասնակից դարձնելով հայերի կոտորածին և նրանց ունեցվածքի թալանին, օսմանյան իշխանությունները նախ և առաջ

չեզոքացնում էին որևէ իշխանություն չճանաչող և ըմբոստ քրդական ցեղերին, որոնք այլ պայմաններում կարող էին հանդես գալ օսմանյան պետության դեմ:

Թուրքական կառավարությունն անհաջողության մատնվելով Վանում[1], Մուշում, չցանկանալով բացահայտել իրենց իրական ծրագրերը, ավելի «նրբորեն» էին գործում: Բացի այդ, ռուսական Կովկասյան բանակը հաջող հարձակում էր ձեռնարկել, և օսմանյան 3-րդ բանակն ամբողջությամբ զբաղված էր հակառակորդի առաջխաղացումը կասեցնելով: Այդ իսկ պատճառով ջարդարարները չէին շտապում սկսել Մուշի և շրջակա գյուղերի և Սասունի հայության զանգվածային կոտորածները: Տեղական իշխանությունները գիտակցում էին, որ քրդական ցեղերն առանց կանոնավոր բանակի, հրետանու և գնդացիրների ի զորու չէին իրականացնել հայերի ոչնչացումը: Երիտթուրքերը ցանկանում էին ռազմաճակատում իրադրությունը փոքր ինչ կայունացնելուց հետո զորքեր տեղափոխել և հաշվեհարդար տեսնել Տարոնի հայության հետ: Իշխանությունների գնահատմամբ, տեղի հայերի ուժը հաշվվում էր երկու հազար զինված մարտիկ:[4] Իրականում հայերն անհամեմատ քիչ թվով մարտիկներ, զենք ու զինամթերք ունեին:

Մուշում և նրա շրջակայքում ստեղծված սպառնալի իրավիճակը և քրդական ուժերի ակտիվությունը չէին կարող չանհանգստացնել հայերին: 1915թ. հունիսի կեսերին Մուշում հրավիրվում է ներկայացուցչական ժողով: Բոլորի համար պարզ էր, որ իշխանությունները ծրագրում են հաշվեհարդար տեսնել հայ բնակչության հետ: Այդուհանդերձ՝ ժողովի մասնակիցները չեն կարողանում համաձայնության գալ, թե ե՞րբ և որտեղի՞ց պետք է սկսել զինված ելույթը: Ռուբեն Տեր-Մինասյանի կարծիքով, դիմադրության կենտրոնը պետք է լիներ Սասունը, ուր պետք է կենտրոնացվեին Մուշի և դաշտի հայկական գյուղերի զինված ուժերը, քանի որ 1890-ական թվականների դեպքերը և Սասունի 1904թ. ապստամբությունը վկայում էին, որ ջարդարարների գլխավոր թիրախը Սասունն էր: Փաստորեն Մուշն իր շրջակա գյուղերով թողնվում էր բախտի քմահաճույքին:[5]

Վ. Փափազյանի հուշերի համաձայն, ժողովի մասնակիցների մեծ մասն ինքնապաշտպանության կենտրոններ էր համարում Գելիեգուզանը, Տալվորիկը և Անդոկ լեռը: Տարոնցիները մեծ հույսեր էին կապում ռուսական Կովկասյան բանակի առաջխաղացման հետ: Դա է վկայում Վ. Փափազյանը. «Իսկ մինչ այդ բոլորի հույսը ռուսական բանակն էր, որ բոլորի կարծիքով, չի կրնար ուշանալ: ... Բայց որովհետև համոզված էին, թե՝ կառավարությունը նախ Սասունը պիտի զարնե, ապա՝ քաղաքը (Մուշը - *Ռ. Ս.*) ու դաշտը, այդ պատճառով ալ որոշած էին, որ ամեն ինչ Սասունի համար գործածվի. դաշտեն կարևոր ուժեր պետք էր կանչվեին անմիջապես և, հնարավոր եղածին չափ, ռազմական պարեն կենտրոնացվեր»:[6]

Ինչպես երևում է Վ. Փափազյանի հուշերից, Տարոնի հայությունը բավական ուշ է նախաձեռնում ինքնապաշտպանության կազմակերպումը: Նրա խոստովանությամբ. «... Կոտոյի Հաջին (Հակոբ Կոտոյան - *Ռ. Ս.*), Տիգրանը և ուրիշ ընկերներ հազիվ ժամանակ ունեցած էին քաղաքի զինական ուժերը քիչ թե շատ կարգի բերելու: Դաշտի գյուղերը ձգած էին իրենց

ճակատագրին»:[7]

Սասուն բարձրացած զինական ուժը մեկ ամիս շարունակ չնախաձեռնեցին որևէ գործողություն: Նման սպասողական դիրքորոշումը, փաստորեն, կանխորոշեց Տարոնի ինքնապաշտպանությունը: Հայ մարտիկների մեծ մասը բարձրացավ Սասուն, միայն մի փոքր մասը մնաց Մուշում: Այն բանից հետո, երբ 1915թ. հուլիսին ռուսական բանակը նահանջեց, իշխանությունները կարողացան զգալի ուժեր կենտրոնացնել Մուշի հայության դեմ:

Թուրքերն ու քրդերն առաջին հարվածը հասցրեցին Մուշ քաղաքի հայկական թաղամասերին և դաշտի հայկական գյուղերին: Իշխանությունների հրամանով քաղաք են շտապում քրդական զինված հրոսախմբեր: Զենք է բաժանվում թուրք քաղաքացիներին: Հայկական թաղամասերն օղակվում են թուրքական բանակի ստորաբաժանումներով և քրդական ու թուրքական ելուզակախմբերով:

1915թ. հունիսի 26-ին Մուշ քաղաքի կառավարիչ Սերվեթը հրամայում է տեղի հայությանը գաղթել, չենթարկվելու դեպքում սպառնալով նրանց հետ հաշվեհարդար տեսնել:[8]

Նույն օրը մի խումբ հայեր մարտերով ճեղքում են հակառակորդի պաշարումը և անցնում Սասուն:

Հունիսի 27-ին Սերվեթն իր մոտ է կանչում Վարդան վարդապետին և պահանջում՝ երկու ժամվա ընթացքում սկսել հայության տարագրությունը: Հանդիպմանը ներկա էին օսմանյան խորհրդարանի պատգամավոր Խոջա Իլիասը և զորքերի հրամանատար Քյազիմ բեյը: Նրանք հավաստիացնում են հոգևոր հորը, որ տարագրության ընթացքում բոլոր միջոցները կգործադրվեն հայերի անվտանգությունն ապահովելու համար:

Միաժամանակ երիտթուրք իշխանությունները շարունակում էին հայերի կոտորածն իրականացնելու նախապատրաստական աշխատանքները: Նրանք հրահանգեցին, որ քաղաքի թուրք բնակիչներն իրենց տների վրա պատկերեն կիսալուսին, որպեսզի խուսափեն, այսպես կոչված, «ցավալի թյուրիմացություններից»:[9]

Վարդան վարդապետը Խոջա Իլիասից և Քյազիմ բեյից վերոհիշյալ «հավաստիացումները» ստանալով՝ առաջնորդարանում ժողով է գումարում և ինքնապաշտպանության կողմնակիցներից պահանջում է չդիմադրել: Դրանով վարդապետը հույս ուներ իր հոտը փրկել կոտորածից:[10] Նրա առաջարկը, սակայն, հանդիպում է Հ. Կոտոյանի, Տիգրան Մկրտչյանի, դերձակ Արոյի, Լևոն Ասլանյանի և այլոց մերժումին: Նրանք վճռում են չենթարկվել տարագրությանը, այլ զենքը ձեռքին մարտնչել:[11]

Իր հերթին իշխանությունները լրացուցիչ ուժեր են բերում՝ երկու հազար զինվոր և 11 թնդանոթ:[12]

1915թ. հունիսի 28-ին սկսում է Մուշ քաղաքի հայության ինքնապաշտպանությունը: Այն սկսելու առիթ է հանդիսանում հայերից մեկի տան վրա կատարած հարձակումը, որի ընթացքում սպանվում է թուրք հարյուրապետը և յոթ զինվոր:

Մուշն ուներ հինգ հայկական թաղամաս՝ 12 հազար բնակիչներով: Նրանց էին միացել շրջակա հայկական գյուղերից փախած 10 հազար հա-

յեր:[13]

Մուշում գտնվող դանիացի միսիոներուհի Ալմա Յոհանսոնի վկայությամբ. «Հայերն իրենց տուներն դուրս չէին ելլեր, անոնք բոլորովին անշարժ կը սպասեին, միայն երբ զինվորները կը խուժեին ոմբակոծումներե ավերակի վերածած տուներե ներս, այն ատեն է, որ կը փորձեին դիմադրություն ցույց տալ կարելին եղածի չափ ողջ մնալու համար»:[14]

Մարտերը Վերին թաղից տեղափոխվում են Ձորի թաղ: Հետագայում Վերին թաղում ջարդարարները հավաքելով 1800-ից ավելի կանանց ու երեխաների, ողջ-ողջ այրում են:[15]

Ձորի թաղում դիրքավորված ինքնապաշտպանության ուժերին հաջողվում է դիպուկ կրակոցներով ոչնչացնել հակառակորդի հրետանային հաշվարկը: Հայերը նաև հետ են մղում հակառակորդի գրոհը: Մինչև 1915թ. հունիսի 29-ը թուրքական զորքն ու քրդական ջոկատները որևէ էական հաջողության չեն հասնում: Անզեն տղամարդիկ, ուշադրություն չդարձնելով թուրքական կրակին, արագորեն վերականգնում են հրետանուց վնասված կամ քանդված դիրքերն ու ամրությունները: Իրադրությունը փոխվում է այն բանից հետո, երբ թուրքական հրամանատարությունը չորս թնդանոթների կրակն ուղղում է Վերին թաղի վրա:

Անընդմեջ հրետանակոծության հետևանքով այլևս հնարավոր չի լինում վերականգնել դիրքերը, ուստի ինքնապաշտպանության մասնակիցներն ամրանում են Վերին թաղի կենտրոնական մասում: Թուրքական հարձակումը դադարում է միայն մթնելուց հետո: Սակայն թաղամասի հրետանակոծությունը շարունակվում է նաև գիշերը:

Վերին թաղի ինքնապաշտպանական ուժերի ղեկավար Լ. Ասլանյանը կարողանում է հանդիպել Հ. Կոտոյանի հետ և վճռել հետագա անելիքը: Որոշվում է բոլոր ուժերը տեղափոխել Ձորի թաղ, որը դառնալու էր դիմադրության գլխավոր կենտրոնը:

1915թ. հունիսի 29-ին դիմադրական մարտեր են տեղի ունենում Բրդի թաղում: Այստեղ մշեցիները, ունենալով սակավ ուժեր, ամրանում են երկու տներում և դիմադրում մինչև երեկո: Թուրքական հրետանին ամբողջությամբ քարուքանդ է անում տները՝ նրա փլատակների տակ թաղելով հայ մարտիկներին:

Հունիսի 29-ին մարտերը շարունակվում են Ձորի թաղում: Թուրքական հրամանատարությունն այս ուղղությամբ է կենտրոնացնում իր հիմնական ուժերը: Հրետանու անընդմեջ կրակը զգալի կորուստներ է պատճառում: Հ. Կոտոյանը և Տ. Մկրտչյանը, շրջելով դիրքերից դիրք, խրախուսում և ոգևորում են ինքնապաշտպանության մասնակիցներին:

Կռվի ընթացքում վիրավորվում է Հ. Կոտոյանը, որը, չնայած վերքին, շարունակում է գլխավորել թաղի ինքնապաշտպանությունը: Նույն գիշերը, 600-700 հոգու՝ անզեն և զինված, հաջողվում է ճեղքել հակառակորդի պաշարումը և դուրս գալ Մուշից:[16]

1915թ. հունիսի 30-ին թշնամին ավելի մեծ ուժերով սկսում է գրոհը: Թուրքական հրետանին առանց ընդհատումի շարունակում է Ձորի թաղի հրետանակոծությունը: Ի վերջո, թուրքերին հաջողվում է մեծ զոհերի գնով ճեղքել մշեցիների պաշտպանությունը: Ինքնապաշտպանության մասնա-

կիցները, Հ. Կոտոյանի գլխավորությամբ, մարտնչում են մինչև վերջին փամփուշտը և զոհվում:

Հայերի դիմադրությունը ճնշելուց հետո թուրքերը քաղաքում վայրենի կոտորած են սկսում: Ա. Յոհանսոնի վկայությամբ, թուրք ոստիկանները երդեհում են մանկատունը՝ հայ որբերի հետ մեկտեղ: Ոստիկաններն առանձնահատուկ «հաճույք» էին ստանում՝ կրակելով վառվող մանկատան որբերի վրա: Թուրք բարձրաստիճան սպաների խոստովանությամբ, Մուշում իրենք ավելի ուժեղ դիմադրության էին սպասում:[17] Քաղաքի կոտորածներին ականատես եղած մի գերմանացի վկայում է. «Յուրաքանչյուր սպա պարծենում էր սպանած անձանց թվով՝ դա համարելով իր ներդրումը Թուրքիան հայ ազգից ազատելու գործում»:[18]

Երիտթուրք ջարդարարները հարկադրում էին հայերին փորել մեծ և խորը փոսեր, ուր ողջ-ողջ նետում էին մշեցիներին, անկախ սեռից ու տարիքից, ապա՝ ծածկում հողով:[19]

Զորքը, թուրք և քուրդ ելուզակները սկսում են հայկական թաղամասերի կողոպուտը և ավերումը: Մուշի հայոց առաջնորդարանի շենքը և հարակից շինություններն ու տներն ամբողջությամբ ավերվում են:[20] Միաժամանակ թշնամին փնտրում է հայերի տներում թաքցրած եկեղեցական թանկարժեք իրերը՝ զանազան անոթներ, խաչեր և այլն: Մշո առաջնորդական փոխանորդ Եղիշե քահանա Տեր Պարսամյանի վկայությամբ, Կարապետ Թյուրյունճյանի տան հատակից դուրս են բերում այնտեղ թաքցված Ս. Աստվածածին եկեղեցու ոսկյա և արծաթյա իրերը ու հնչակյանների պահ տված գումարը:[21]

Ելուզակներին հաջորդվում է գտնել նաև Ս. Առաքելոց վանքի թանկարժեք եկեղեցական իրերը:[22] Ե. Տեր Պարսամյանի վկայությամբ, անվնաս էր մնացել միայն Ս. Կարապետ վանքի «ամենամեծ և ամենակարևոր գաղտնատունը, մյուսները քանդվել և բացվել են»:[23]

Մուշի հայկական եկեղեցիներից միայն մեկն էր զերծ մնացել ավերումից, որովհետև այն վեր էր ածվել զինապահեստի:[24]

1916թ. փետրվարի տվյալներով Մուշում կային 50 հոգի հայ և թուրք:[25] Գեներալ Թ. Նազարբեկովի վկայությամբ, 1916թ. փետրվարի 13-ին իրեն այցելեցին քաղաքում մնացած թուրք բնակիչների ներկայացուցիչները՝ տեղի շեյխը, մի քանի մոլլա և մեծահարուստներ: Նրանք իրենց անհամաձայնությունը հայտնեցին երիտթուրքական իշխանությունների կատարած վայրագությունների վերաբերյալ: Գեներալի վկայությամբ. «Շեյխը ողջ ժամանակ... բարձրաձայն բողոքում էր այդ սպանդի (հայերի կոտորածի - *Ռ. Ս.*) դեմ»:[26]

Այսպիսով, 1915թ. հունիսի 28-30-ը Մուշ քաղաքի հայ բնակչությունը, ունենալով անհամեմատ սակավ մարտունակ ուժեր, զենք ու զինամթերք, դիմադրեց թուրք և քուրդ հրոսակներին, նախընտրելով զենքը ձեռքին զոհվել իրենց հայրենի օջախներում, քան ենթարկվել տեղահանության, որը նշանակում էր անխուսափելի մահ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Саргизов Л. М. Ассирийцы стран Ближнего и Среднего Востока. Первая четверть XX века, Ереван, 1979, стр. 26. Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 45, ցուցակ 1, գործ 25, թ. 59: Арутюнян А. О. Кавказский фронт 1914-1917гг., Ереван, 1971, стр. 67-68. Խոսրոևա Ա. Ա. Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ - XX դարի առաջին քառորդ), Երևան, 2004, էջ 75-77:

[2] Փափազյան Վ. Իմ հուշերը, Պեյրութ, 1952, հատոր 2, էջ 327:

[3] Վանի հայության ինքնապաշտպանության մասին ավելի մանրամասն տե՛ս Սահակյան Ռ. Օ. 1915թ. Վանի հերոսամարտը օտար աղբյուրներում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, N 8, էջ 54-63: Նույնի՝ Վասպուրականի հայության գոյամարտը 1915 թվականին, «Պատմա-բանասիրական հանդես», 1995, N 1, էջ 19-30: Նույնի՝ Վան քաղաքի հայության ինքնապաշտպանությունը 1915 թվականին, «Հայկական բանակ», 1996, N 1, էջ 15-24:

[4] Հայերի ցեղասպանությունն ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունը Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988, էջ 401:

[5] Փափազյան Վ., նշվ.աշխ., էջ 321:

[6] Նույն տեղում, էջ 363:

[7] Նույն տեղում, էջ 359:

[8] «Հորիզոն», Թիֆլիս, 1915, 8 սեպտեմբերի:

[9] Մելիքյան Ս. Հայ կամավորի հուշերից (թարգմ. ֆրանս. ձեռագրից), Թիֆլիս, 1917, էջ 12:

[10] Սասունի Կ. Պատմություն Տարոնի աշխարհի, Բեյրութ, 1967, էջ 890:

[11] Նույն տեղում, էջ 891:

[12] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Новые документы. Сборник. Отв. ред. В. А. Микаелян, Ереван, 1995, стр. 258.

[13] Արզումանյան Մ. Վ. Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, էջ 324:

[14] Յոհանսոն Ա. Աքսորյալ ժողովուրդ մը, Սթոքհոլմ, 1980, էջ 8:

[15] «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, 23 հոկտեմբերի, էջ 7:

[16] Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 906:

[17] Յոհանսոն Ա., նշվ. աշխ., էջ 13:

[18] Ներսիսյան Մ. Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, 2005, էջ 96:

[19] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 19, թ. 244:

[20] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 132, թ. 69 շրջ:

[21] Նույն տեղում, թ. 70:

[22] Նույն տեղում, թ. 69 շրջ.:

[23] Նույն տեղում, թ. 70: Այս թաքստոցից դուրս բերված և էջմիածին տարված իրերի ցուցակը տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 132, թ. 80-81:

[24] Մելիքյան Ս., նշվ. աշխ., էջ 14:

[25] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 19, թ. 239:

[26] Նույն տեղում, թ. 243շրջ.:

Հավելված N 1

ՆՈՐԻՆ Ս.[ՈՒՐԲ] ՕԾՈՒԹՅԱՆ
ՏԻԱՌՆ ՏԻԱՌՆ ԳԵՈՐԳ Բ.
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Խոնարհ ծառանիդ [ծառայդ] Տարոնո Մուշ քաղաքից [ընդգծումը տեքստում - *Ռ. Մ.*] և տեղվոյ մի քանի տարվա ազգային առաջնորդական փոխանորդ [ընդգծումը տեքստում - *Ռ. Մ.*] հայկական ծանոթ կոտորածից կորսցուցած եմ չորս հատ արու զավակ ու ընտանիքս՝ ինչ-ինչ դժվարությամբ ազատված իբրև փախստական Սասնո լեռներից, 15 զինված ընկերներով Աստծո կալող զորությամբ հաջողեցա անցնել Ռուսաստան անցյալ տարվա [1915թ. - *Ռ. Մ.*] հոկտեմբեր ամսի 21-ին ու եղա Էջմիածին [և] Վեհափառությանդ դիվանին հարկ եղած տեղեկագիր տալե վերջ անցա Թիֆլիս, ուր կգտնվեմ մինչև այժմ անպաշտպան ու թափառական վիճակի մեջ, ոչ մի օգնություն չստանալով տեղե մը. միայն պաշտպանված մշեցի հայրենակիցներուս կողմանե և սպասելով բախտի տնօրինության:

Արդ, Վեհ. [ափառ] Տեր

Այժմ կիմանամ, որ Վեհափառությունդ մտադիր է քանի մ'անձինք ուղարկել Մուշ, կը խնդրեի, որ ի նկատի առնվի մեր ներկայությունը ևս ու մի քանի տարվա հայրենիքիս մեջ եղած զանազան գաղտնիքներ, որն պաշտոնիս բերմամբ ինձ ծանոթ են և ի հարկին կրնամ պետք եղած ծառայությունը կատարել Ազգին ու Վեհափառությանդ, եթե կամենա:

Համբուրից Օծյալ Ս. Աջոյն ձեռաց՝ մնամ
խոնհարկությամբ
Եղիշե Քհնյ. [քահանա] Տ. [եր]
Պարսամյան

5 մարտ 1916
Թիֆլիս

*ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 132, թ. 572: Բնագիր: ձեռագիր:*

ՀԱՎԵԼՎԱԾ N2

ՀԱՐԳԵԼԻ ՊՐՆ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՆԱԽ. [ԱԳԱՀ] ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Քանի մ'օրե հասած եմ մեր հայրենիք Մուշ, բայց ցավ է ըսել, որ բոլորովին ավերված ու քանդված է, քաղաքի ամբողջ հայերու տուներ քար՝ քարի վրա չէ մնացած, նմանապես դաշտի գյուղերն ալ, ավերակ ու քանդված են մեր շրջանի վանքերն ալ: Ինչպես Ձեզ հայտնի է, մենք՝ Ձեր և Վեհափառի կողմից ղրկվեցանք երկիրը մի քանի ընկերներով միասին, այդտեղ գտնված Ազգային ու եկեղեցապատկան իրերը որոնելու, կուգամ հայտնելու, որ բացի Ս. Կարապետի վանքի այն ալ մի կարևոր և թանկագին թաքստոցին, որն հատուկ ցուցակով մը անմիաջապես փոխադրվեցան Ս. Էջմիածին Վեհափառ Հայրապետի կարգադրության համաձայն՝ մյուս վանքերու և քաղաքի եկեղեցիաց ոչ մի թաքստոց գտնվեցավ, որովհետև ավագուց կոտորածից վերջ թուրք կառավարությունը և թուրք ժողովուրդը, ոմպնք ողջ մնացող այն ժամանակվա հայերի մատնությամբ և ցուցմունքով և

ոմանք ալ իրենք իրենց փնտրած ու գտած են: Կմնա առայժմ Ս. Հովհաննու վանքի թաքստոցները, որ մինչև հիմա չենք իմացած, թե գտնված են, թե ոչ, այն [այդ - *Ռ. Մ.*] շրջանեն ալ չկա այնպիսի անձինք, որոնք ծանոթ էին քիչ թե շատ այդ վանքի թաքստոցներուն, բայց կաշխատեմ նորեն, թերևս հաջողեմ 1-2 մարդ գտնել, երթալ այդ վանքը և պեղել տալ այս ու այն կողմ, այդ ալ դրամի պետքություն ունի, հակառակ, որ չունեմ մի քան ռուպլի ծախսելու այդ՝ և աղոր նմաններու համար: Քաղաքի մեջ կգտնվեն քանի մը հազար անձ՝ մեծամասնությունը կին և երեխա են, որոնցմե շատերը զուրկ են բոլորովին ապրուստի միջոցներե, իսկ փոքրամասնությունը, պտոնք այր մարդիկ են, կերթան 6-8 ժամ հեռու գտնվող հայ և քուրդ գյուղերը ցորենի, կորեկի և կամ թե գլգլի հորեր գտնել, այն ալ ռուս զորքերը կուգան, կհանդիպեն կամ ճանապարհին կհափշտակեն իրենցմե: Գոնե այդ հափշտակության ձևը դադրեր [դադարեցնել - *Ռ. Մ.*], կարելի էր մի քիչ ապրուստի միջոց գտնել ու ապրել, ազատված ժողովուրդը Խութի, Բոնաշենի, Մոտկանի, Խարզանի, Փսանքի, Սասունի և Մշո դաշտի շրջաններից են: Քաղաքից ընդամենը ազատված էին 115 անձ՝ կին ու երեխա: Հիշյալները ոչ թե օսմ.[անյան] կառավարության կամ թուրքերու շնորհիվ ազատվեցին, այլ Բալաքցի և ուրիշ աշիրեթի քրդերու շնորհիվ մնացած են: Տարոնի ամբողջ շրջանի ժողովրդի մեծամասնությունը, որ այրած են գյուղերս մարագներու և ախոռներու [և] տուներու մեջ, այնպես [այդպես - *Ռ. Մ.*] բաց կմնան արևի և ոտքի ձեռքի առջև: Չգիտեմ ինչ ընեմ՝ ծածկենք ոչ հիմակ ու հիմա սպասեինք, եթե ծածկել հարկ լինի, ինչպես նաև եկեղեցիներու մաքրել կամ թեթև կերպով քանդված գոնե մի եկեղեցի գոնե շինել տալու, որ ժամերգություն ըսեինք, բավական դրամ հարկավոր է, թեև Վեհ.[ափառին] և դիվանապետը [դիվանապետին] այս և ուրիշ խնդիրներու մասին հարկ եղած տեղեկություն գրած և խնդրած եմ պետք եղածը, բայց տեսնենք, թե շուտով մի կարգադրություն պիտի ընեն, թե՞ ոչ մեր դիմումները ծայն բարբառո անապատի պիտի մնան:

Ողջունի մնամ աղոթարար

և խորին հարգանքով

Նախկին առաջն.[որդական] փոխ.[անորդ] Մուշի՝ Եղիշե քահանա Տ.[եր] Պարսամյան

17 մայիս 1916

Մուշ

*Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 242, ցուցակ 1, թերթ 1-2: Բնագիր: Ձեռագիր:*

Резюме

Самооборона армянских кварталов Муша в 1915 году.

Рубен Саакян

Как известно в годы Первой мировой войны армянское население, находящееся под господством Османской империи в Западной Армении и в армянонаселенных районах Малой Азии, подверглось массовой депортации и резне.

Чтобы ввести в заблуждение мировую общественность, младотурки объясняли "необходимость" своих нечеловеческих действий "необходимостью" применения принудительных мер против армян "восставших" сел и

городов. Между тем произошло совершенно обратное. Та часть армянского населения, которая из горького опыта предыдущей резни смогла приобрести некоторое количество оружия, привегла к самообороне исключительно после начала резни. Одним из таких населенных пунктов был г. Муш.

26-го июня 1915г. турецкие власти г. Муша приказали армянскому населению депортироваться. Однако, жители пяти армянских кварталов решили не подчиняться и с оружием в руках сражаться.

С 28-го июня по 30-ое мая 1915г. малочисленные и слабо вооруженные мушские армяне ожесточенно сопротивлялись турецким регулярным войскам, жандармам и курдским отрядам. С помощью артиллерии, турецкому командованию удалось разрушить армянские дома, где оборонялись армяне. Гражданское население почти полностью было уничтожено, а имущество – разграблено.

В конце статьи приводятся письма от 5-го марта и 17 мая 1915г., священника, бывшего викария Е. Тер-Парсамяна Католикосу Всех армян Геворгу 5-му и председателю Кавказского Благотворительного общества А. Аракеляну о тайниках, где скрыта была от турок и курдов церковная утварь и которая была полностью ограблена.


## Summary

### The Self-defence of Armenian Quarters of Moush in 1915.

Ruben Sahakyan

As is well known during the First World War the Armenian population, which lived under the Ottoman Empire's domination in Western Armenia and other Armenian populated parts of Asia Minor was exiled and massacred.

To mislead the international community the Young Turks justified their inhuman actions by means of "necessity" of application of coercive actions against the Armenian "revolted" cities and villages. Nevertheless, in reality it was quite the opposite. That part of the Armenian population, based on a bitter experience of previous massacre, could buy some weapon, resorted to self-defense only after the massacres started. One of those settlements was Moush.

On 26th of June 1915, the Armenian population of Moush was ordered to deport by Turkish officials. Nevertheless, the inhabitant of five Armenian quarters decided not to submit and to fight.

From 28th of June till 30th of July 1915 not numerous and badly armed Armenians of Moush stood up to the Turkish active forces, gendarmes and Kurdish squadrons. With the help of artillery the Turkish command managed to destroy Armenians' houses where they held the line. The civilians were almost completely annihilated and the property was plundered.

At the end of the article, there are two letters of the priest, former vicar E. Ter-Parsamyan (5th of March and 17th of May) to the Catholicos of all Armenians Gevorg the 5th and to the chairman of Caucasian Benevolent Society A.Arakelyan. He wrote about the hiding-places where the church plate was hided from Turks and Kurds.